

Օրինակ 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

«Գարանտ – Լիմենս» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի 22.06.2010 թ-ի արտահերթ ընդհանուր ժողովում (արձանագրություն թիվ 03/10)

ԳՐԱՆՑՎԱԾ Է՝

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկում

„03„ 08 2010թ.

Գրանցման համար 5

Ժողովի նախագահ՝



Ա. Բաբլոյան

ՀՀ Կենտրոնական Բանկի նախագահ՝



Ա. Ջավադյան

«ԳԱՐԱՆՏ - ԼԻՄԵՆՍ»

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

(ՆՈՐ ԽՍԲԱԳՐՈՒԹՅԱԲ)

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1 «Գարանտ-Լիմենս» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) շահույթ ստանալու նպատակ հետապնդող առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է:
- 1.2 Ընկերությունը ստեղծվել է «Գարանտ-Լիմենս» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության 1999թ. փետրվարի 2-ի հիմնադիր ժողովի որոշմամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 1.3 Ընկերության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին պետական գրանցամատյանում գրառման) պահից:
- 1.4 Ընկերությունը ունի իր ֆիրմային անվանումը (հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված այլ վավերապայմաններ պարունակող կլոր կնիք, դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև խորհրդանիշ, օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու անհատականացնող այլ միջոցներ:
- 1.5 Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, ապահովագրական և ֆինանսական ոլորտների գործունեությունը և վերահսկումը կարգավորող օրենքներով, ՀՀ այլ օրենքներով, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով (այսուհետ՝ Օրենսդրություն), ինչպես նաև Կանոնադրությամբ:
- 1.6 Ընկերության բաժնետերերի և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են Օրենսգրքով, Օրենսդրությամբ և Կանոնադրությամբ:
- 1.7 Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար: Ընկերության բաժնետերերը Ընկերության պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:
- 1.8 Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար, իսկ վերջինս պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:
- 1.9 Ընկերության ֆիրմային անվանումն է՝ հայերեն լրիվ՝ «Գարանտ-Լիմենս» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերություն
կրճատ՝ «Գարանտ-Լիմենս» ապահովագրական ՓԲԸ
ռուսերեն լրիվ՝ “Гарант-Лименс” Страхование Закрытое Акционерное Общество
կրճատ՝ “Гарант-Лименс” Страхование ЗАО
անգլերեն լրիվ՝ “Guarant-Limence” Insurance Closed Joint Stock Company
կրճատ՝ “Guarant-Limence” Insurance CJSC
- 1.10 Ընկերության մշտական գործող մարմնի իրավաբանական հասցեն և գտնվելու վայրն (փոստային հասցեն) է՝ Հայաստանի Հանրապետություն, 0014, ք. Երևան, Մամիկոնյանց փողոց 30:

2. Ընկերության իրավական կարգավիճակը և գործունեության ոլորտը

- 2.1 Ընկերությունը պետական գրանցման պահից ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:
- 2.2 Ընկերությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

- 2.3 Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և իրավունք ունի Օրենսդրությամբ սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ (դրամով, տարադրամով) Հայաստանի Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս:
- 2.4 Ընկերության ստեղծման նպատակը տնտեսական գործունեության իրականացման ճանապարհով շահույթի ստացումն է:
- 2.5 Ընկերության գործունեության հիմնական ոլորտն է համարվում ապահովագրական գործունեության կազմակերպումը և իրականացումը:
- 2.6 Ընկերությունը իրականացնելու է ոչ կյանքի ապահովագրություն հետևյալ դասերով`
- դժբախտ պատահարներից ապահովագրություն (ներառյալ` արդյունաբերական վնաս եւ մասնագիտական գործունեության ընթացքում ձեռք բերված հիվանդություններից),
 - առողջության ապահովագրություն,
 - ցամաքային տրանսպորտի ապահովագրություն (բացառությամբ երկաթուղային),
 - փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն,
 - հրդեհից եւ բնական աղետներից ապահովագրություն,
 - գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն,
 - ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաեւ` բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն,
 - ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն,
 - աջակցության ապահովագրություն:
- 2.7 Ընկերությունը բացի ապահովագրական գործունեությունից կարող է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած այլ գործառնություններ և գործունեություն:
- 2.8 Կանոնադրությամբ սահմանված այն գործունեությունը, որի իրականացման համար պահանջվում է համապատասխան լիցենզիա, Ընկերությունը կարող է իրականացնել միայն այդ լիցենզիայի առկայության դեպքում և միայն այն ժամանակահատվածում, որի ընթացքում լիցենզիան գործում է:
- 2.9 Ընկերությունը կարող է լինել այլ ընկերության (այդ թվում` դուստր ու կախյալ) ու ընկերակցության հիմնադիր (բաժնետեր), բացառությամբ Օրենսգրքով և Օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:
- 2.10 Ընկերությունն իրավունք ունի Կանոնադրության, Օրենսգրքի, այլ օրենքների և իրավական ակտերի համաձայն ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ), ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքում:

3. Ընկերության իրավունքներն ու պարտականությունները

- 3.1 Ընկերությունն իրավունք ունի`
- 3.1.1 Օրենսդրությամբ չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում` արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը,
- 3.1.2 օտարել, վարձակալության տալ, փոխանակել, Օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային և ոչ գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու,

- 3.1.3 ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային առևտրային վարկեր, այդ թվում արտարժույթով,
- 3.1.4 Օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր,
- 3.1.5 Օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր և կրել պարտավորություններ,
- 3.1.6 ինքնուրույն ընտրել արտաքին տնտեսական գործունեության վարման կարգը, այն իրականացնել անմիջականորեն, առանց միջնորդի կամ այլ կազմակերպության միջոցով՝ նրա հետ մտնելով պայմանագրային հարաբերությունների մեջ,
- 3.1.7 ունենալ միջոցներ արտարժույթով, Օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ձեռք բերել (այդ թվում՝ ստանալ որպես արտաքին տնտեսական գործունեության արդյունք) արտարժույթով միջոցներ և ինքնուրույն տնօրինել դրանք,
- 3.1.8 ինքնուրույն պլանավորել իր գործունեությունը,
- 3.1.9 Օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույք, արտադրված, գնված և այլ օրինական ձևով ստացված արտադրանք, մատուցել ծառայություններ և կատարել աշխատանքներ, օգտվել այլ անձանց կողմից կատարվող աշխատանքներից և մատուցվող ծառայություններից,
- 3.1.10 այլ պետություններում՝ նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք և (կամ) ձեռնարկություններ և անդամակցել իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկություններին,
- 3.1.11 գործունեության տարեկան կամ միջանկյալ արդյունքներն ամփոփելուց հետո ձևավորված շահույթի մի մասը ուղղել կանոնադրական կապիտալի ավելացմանը՝ տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման ճանապարհով, լինել իրավաբանական անձանց միությունների հինադիր և մասնակից,
- 3.1.12 լինել իրավաբանական անձանց միությունների հինադիր և մասնակից,
- 3.1.13 գտվել Օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:
- 3.2 Ընկերությունը պարտավոր է՝
- 3.2.1 Օրենսդրությամբ սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում, ներկայացնել ֆինանսական, վիճակագրական և այլ հաշվետվություններ,
- 3.2.2 պահպանել ապահովագրական գործունեությունը կարգավորող Օրենսդրությամբ սահմանված պահանջները, որոնք վերաբերվում են հիմնական տնտեսական նորմատիվներին, տեխնիկական պահուստներին, վերաապահովագրությանը, համատեղ ապահովագրությանը, ապահովագրական գործունեությունից բխող գործառնություններին, ներդրումային գործունեությանը, հաճախորդների հետ հարաբերություններին, ընկերության հետ կապված անձանց հետ գործարքների կնքմանը, տեղեկատվությանը և դրա հրապարակմանը,
- 3.2.3 աշխատանքային պայմանագրեր կնքել Ընկերության աշխատակիցների հետ,
- 3.2.4 պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցրած վնասը՝ կնքած պայմանագրերը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով,
- 3.2.5 Օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել Ընկերության սնանկացման մասին, այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտատերերի օրինական գույքային պահանջները,
- 3.2.6 ապահովել Ընկերության փաստաթղթերի պահպանումը և արխիվացումը,
- 3.2.7 ապահովել Ընկերության և նրա մասնաճյուղի գործունեության տարածքի և տեխնիկական հագեցվածության նկատմամբ Օրենսդրությամբ սահմանված պահանջները,
- 3.2.8 համապատասխան մարմիններին և անձանց տրամադրել Օրենսդրությամբ սահմանված տեղեկություններ և տվյալներ,
- 3.2.9 կրել Օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4. Ընկերության կանոնադրական կապիտալը, այլ կապիտալներ և ակտիվներ

- 4.1 Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը:
- 4.2 Ընկերության կանոնադրական կապիտալը չի կարող պակաս լինել Օրենսդրությամբ սահմանված չափից:
- 4.3 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմվում է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից: Փաստացի համալրված կանոնադրական

- կապիտալը հավասար է Ընկերության տեղաբաշխված բոլոր տեսակի բաժնետոմսերի դիմաց ներդրված գումարին:
- 4.4 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է **1 531 796 900** (մեկ միլիարդ հինգ հարյուր երեսունմեկ միլիոն յոթ հարյուր իննսունվեց հազար ինը հարյուր) դրամ, որը կազմում է **109 885** (մեկ հարյուր ինը հազար ութ հարյուր ութսունհինգ) հատ սովորական անվանական բաժնետոմս՝ մեկ բաժնետոմսը **13 940** (տասներեք հազար ինը հարյուր քառասուն) դրամ անվանական արժեքով:
- 4.5 Բոլոր **109 885** բաժնետոմսերը տեղաբաշխված և լրիվ վճարված են բաժնետերերի կողմից:
- 4.6 Ընկերության կանոնադրական կապիտալը համալրվում է միայն փողով (Հայաստանի Հանրապետության դրամով):
- 4.7 Ընկերության կանոնադրական կապիտալի չափը կարող է փոփոխվել Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ: Կանոնադրական կապիտալի փոփոխություններն ուժի մեջ են մտնում Կանոնադրությունում համապատասխան փոփոխությունները կատարելուց և Օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցում ստանալուց հետո:
- 4.8 Ընկերության կանոնադրական կապիտալի չափը կարող է ավելացվել Ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի թողարկմամբ և տեղաբաշխմամբ:
- 4.9 Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը կարող է կատարվել միայն Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով:
- 4.10 Կանոնադրական կապիտալի չափի ավելացումը կամ նվազեցումը կատարվում է Օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 4.11 Կանոնադրական կապիտալի չափի ավելացման մասին որոշումն ընդունում է Ընկերության տնօրենների խորհուրդը՝ (այսուհետ խորհուրդ):
- 4.12 Կանոնադրական կապիտալի չափի նվազեցման մասին որոշումն ընդունում է բաժնետերերի ընդհանուր ժողովը:
- 4.13 Ընկերության շահույթից մասհանումների հաշվին ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է Ընկերության կանոնադրությամբ սահմանված չափից ավելի փոքր մեծություն, ապա հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթից՝ առնվազն 5 տոկոսի չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից: Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չի բավարարում: Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:
- 4.14 Ընկերությունը բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է ստեղծել Օրենսդրությամբ նախատեսված այլ հիմնադրամներ:

5. Բաժնետոմսեր և այլ արժեթղթեր

- 5.1 Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել հասարակ (սովորական) բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր: Ընկերության հասարակ բաժնետոմսերն անվանական են և ոչ փաստաթղթային:
- 5.2 Ընկերության հասարակ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին որոշումը ընդունում է խորհուրդը:
- 5.3 Ընկերության կողմից թողարկված բաժնետոմսերը բաժնետերերի միջև տեղաբաշխվում են անվանական արժեքով կամ խորհրդի կողմից հաստատված՝ Օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված շուկայական արժեքով:
- 5.4 Ընկերության պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման մասին որոշումը ընդունում է Ընդհանուր ժողովը:
- 5.5 Ընկերության կողմից արժեթղթերի թողարկումը և տեղաբաշխումը իրականացվում է Օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 5.6 Բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվում է բաժնետերերի ռեեստրում, որը վարում է Օրենսդրությամբ սահմանված կարգով նման գործառույթ իրականացնելու իրավունք ունեցող մասնագիտացված կազմակերպությունը:

5.7 Բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է բաժնետերերի ռեեստրում համապատասխան գրառումը կատարելու պահից:

6. ԸՆԿԵՐՈՒՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ, ՆՐԱՆԳ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱՅՐՏԱԿԱՆՈՒՅՈՒՆՆԵՐԸ

- 6.1 Օրենսդրությամբ սահմանված կարգով ընկերության բաժնետեր կարող են լինել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձինք:
- 6.2 Ընկերության յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը տալիս է միևնույն իրավունքները:
- 6.3 Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերը՝ Օրենսդրության և Կանոնադրության համաձայն, իրավունք ունի՝
- 6.3.1 օգտվել ընկերության բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքից,
 - 6.3.2 ձայնի իրավունքով մասնակցել ընկերության ընդհանուր ժողովին,
 - 6.3.3 մասնակցել ընկերության կառավարմանը,
 - 6.3.4 ստանալ շահութաբաժիններ ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
 - 6.3.5 առաջնահերթ կարգով ձեռք բերել ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե Օրենսդրությամբ և Կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ,
 - 6.3.6 ստանալ ընկերության գործունեության վերաբերյալ Օրենսդրությամբ սահմանված ցանկացած տեղեկատվություն՝ այդ թվում՝ ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռին, հաշվետվություններին, ընկերության գործունեությանը վերաբերվող փաստաթղթերին և այլն,
 - 6.3.7 ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 10% կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերին տիրող բաժնետերերը կարող են պահանջել փորձագետ կամ փորձագետների խումբ՝ ընկերության գործունեությանը վերաբերող հաշվետվությունները և փաստաթղթերը ստուգելու նպատակով: Ստուգման հետ կապված ծախսերը փոխհատուցում են ստուգումը պահանջող բաժնետերերը,
 - 6.3.8 ընկերության ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
 - 6.3.9 ժողովներում հանդես գալ առաջարկություններով,
 - 6.3.10 ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,
 - 6.3.11 դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
 - 6.3.12 ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած ընկերության գույքի իր հասանելիք մասը,
 - 6.3.13 օգտվել Օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներից:
- 6.4 Ընկերության բաժնետերերն ունեն իրենց սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը Օրենսդրությամբ չարգելված ձևով օտարելու կամ այլ անձանց փոխանցելու իրավունք:
- 6.5 Բաժնետերը, որը ցանկություն է հայտնել օտարելու սեփականության իրավունքով իրեն պատկանող բաժնետոմսերը, գրավոր դիմում է ներկայացնում Խորհրդին: Խորհուրդը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է բոլոր բաժնետերերին բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքի մասին, պատվիրված մասնակով կամ առձեռն: Բաժնետերերի նախապատվության իրավունքի (այլ բաժնետիրոջ կողմից վաճառվող բաժնետոմսերի ձեռքբերման) իրականացման ժամկետը սահմանվում է բաժնետոմսերի վաճառքի առաջարկման օրվանից՝ 35 օր:
- 6.6 Բաժնետերերի կողմից բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չիրականացնելու դեպքում այդ բաժնետոմսերը, սեփականատիրոջ հետ համաձայնեցված գնով, ձեռք բերելու իրավունք ունի ընկերությունը:
- 6.7 Ընկերության կողմից բաժնետոմսեր ձեռք բերելու նախապատվության իրավունքից օգտվելու կամ հրաժարվելու մասին որոշումը ընդունում է Խորհուրդը: Ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելուց հրաժարվելու կամ դրանց գնի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում, բաժնետոմսերը կարող են օտարվել երրորդ անձի:
- 6.8 Բաժնետերերի նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը չի կիրառվում այն դեպքում, երբ իրենց բաժնետոմսերը, կամ դրանց մի մասը օտարելու ցանկություն են հայտնել ընկերության բոլոր բաժնետերերը միաժամանակ:

- 6.9 Ընկերության նախապատվության իրավունքը չի կիրառվում այն դեպքում, երբ շրջանառության մեջ մնացած բաժնետոմսերի անվանական արժեքների գումարը կնվազի Օրենսդրությամբ սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն չափից:
- 6.10 Բաժնետոմսերի շուկայական արժեքի որոշման անհրաժեշտության դեպքում Ընկերությունը առաջնորդվում է Օրենսդրության դրույթներին համապատասխան:
- 6.11 Ընկերության բաժնետոմսերի գրավի և հետագայում գրավառուի կողմից դրանց վրա բռնագանձում տարածելու դեպքում՝ կիրառվում են Կանոնադրության 6.4 կետի կանոնները:
- 6.12 Ընկերության բաժնետիրոջ բաժնետոմսերն անցնում են նրա ժառանգներին կամ իրավահաջորդներին:
- 6.13 Բաժնետեր իրավաբանական անձի լուծարման դեպքում կիրառվում են Կանոնադրության 6.4 կետի կանոնները:
- 6.14 Հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերին չի կարող տրամադրվել նրանց պատկանող հասարակ (սովորական) բաժնետոմսերի քանակից չբխող լրացուցիչ ձայնի իրավունք:
- 6.15 Հասարակ (սովորական) բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումները Ընկերության կողմից չեն երաշխավորվում:
- 6.16 Բաժնետերերը պարտավոր են՝
- 6.16.1 անհրաժեշտության դեպքում ներկայացնել իրենց վերաբերյալ Օրենսդրությամբ սահմանված տեղեկատվություն,
- 6.16.2 կատարել Կանոնադրությամբ սահմանված պահանջները,
- 6.16.3 չհարապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնի տեղեկությունները:

7. Շահութաբաժինների վճարման կարգն ու պայմանները

- 7.1 Ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունելու (հայտարարելու) իր բաժնետերերին՝ տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժինների բաշխման և վճարման մասին:
- 7.2 Շահութաբաժինները կարող են վճարվել ինչպես դրամով, այնպես էլ գույքով:
- 7.3 Տարեկան ֆինանսական հաշվետվություններում արտացոլված շահույթը կարող է բաշխվել Ընկերության բաժնետերերի միջև կամ տեղափոխվել հաջորդ ֆինանսական տարի, եթե պարտադիր պահուստները կամ Կանոնադրությամբ սահմանված այլ պահուստները ստեղծված և ամբողջությամբ համալրված են:
- 7.4 Կանոնադրական կապիտալի հաշվին շահութաբաժինների վճարումն արգելվում է:
- 7.5 Ընկերություն իրավունք չունի վճարելու տարեկան շահութաբաժինները եթե՝
- 7.5.1 վճարման պահին կամ վճարման հետևանքով խախտվում է սահմանված տնտեսական նորմատիվներից թեկուզ մեկը,
- 7.5.2 Օրենսդրությամբ սահմանված վերահսկող մարմինը պահանջել է վերացնել ֆինանսական կամ այլ հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության անարժանահավատությունը և Ընկերությունը չի կատարել խախտումը վերացնելու հանձնարարականը,
- 7.5.3 վճարման պահին Ընկերության կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Ընկերություն առկա չբաշխված զուտ շահույթի գումարը:
- 7.6 Շահութաբաժինների վճարման համար Խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն այն բաժնետերերը, որոնք գրանցված են ռեեստրում տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ:
- 7.7 Շահութաբաժինների վճարման, չափի, դրա վճարման ձևի և ժամկետների մասին որոշումն ընդունում է տարեկան ընդհանուր ժողովը՝ Խորհրդի առաջարկությամբ:
- 7.8 Տարեկան ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունել բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու կամ ոչ լրիվ չափով վճարելու մասին:

8. Ընկերության կառավարման մարմինները և ղեկավարները

- 8.1 Ընկերության կառավարման մարմիններն են՝
- 8.1.1 ընդհանուր ժողովը,

- 8.1.2 տնօրենների խորհուրդը,
- 8.1.3 գործադիր մարմինը՝ ընկերության տնօրենը:
- 8.2 Ընկերության ղեկավարներն են՝
- 8.2.1 Խորհրդի նախագահը և անդամները,
- 8.2.2 տնօրենը,
- 8.2.3 տնօրենի տեղակալը,
- 8.2.4 գլխավոր հաշվապահը,
- 8.2.5 գլխավոր հաշվապահի տեղակալը,
- 8.2.6 ներքին աուդիտի ղեկավարը և անդամները,
- 8.2.7 տարածքային և կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը և գլխավոր հաշվապահը,
- 8.2.8 պատասխանատու ակտուարը,
- 8.2.9 մասնաճյուղի առկայության դեպքում՝ նրա տնօրենը, տեղակալը, գլխավոր հաշվապահը և նրա տեղակալը:

9 Բաժնետերերի ընդհանուր ժողովը

- 9.1 Բաժնետերերի ընդհանուր ժողովն Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:
- 9.2 Ընկերությունը պատավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով:
- 9.3 Ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից 2 ամիս հետո, 3 ամսվա ընթացքում:
- 9.4 Բաժնետերերի տարեկան ժողովից բացի, գումարվող մյուս ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ:
- 9.5 Արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, տնօրենի, ներքին աուդիտի ղեկավարի, արտաքին աուդիտն իրականացնող անձի կամ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերեր հանդիսացող բաժնետերերի (բաժնետերերի) պահանջով,
- 9.6 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝
- 9.6.1 Ընկերության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,
- 9.6.2 Կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,
- 9.6.3 Ընկերության վերակազմակերպումը,
- 9.6.4 Ընկերության լուծարումը,
- 9.6.5 լուծարային հանձնաժողովի նշանակումը, ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,
- 9.6.6 Ընկերության Խորհրդի քանակական կազմի հաստատումը, Խորհրդի անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- 9.6.7 Խորհրդի ներկայացմամբ՝ ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
- 9.6.8 Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների եւ վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը եւ տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,
- 9.6.9 հաշվիչ հանձնաժողովի ձեւավորումը,
- 9.6.10 բաժնետոմսերի համախմբումն ու բաժանումը,
- 9.6.11 Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,
- 9.6.12 ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը,
- 9.6.13 Օրենսդրությամբ նախատեսված այլ հարցերով որոշումների ընդունումը:
- 9.7 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք ունի քննարկել և որոշումներ ընդունել նաև Օրենսդրությամբ և Կանոնադրությամբ բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը պատկանող ցանկացած հարցի շուրջ:
- 9.8 Բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե նրա աշխատանքներին մասնակցում են Ընկերության ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 50 տոկոսը տնօրինող բաժնետերեր, բացի Օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված դեպքերից:

- 9.9 Քվորումի բացակայության դեպքում գումարվում է նոր ժողով, որն իրավասու է, եթե աշխատանքներին մասնակցում են Ընկերության ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 30 տոկոսը տնօրինող բաժնետերեր, բացի Օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված դեպքերի:
- 9.10 Կանոնադրության 9.6 կետի 9.6.3; 9.6.6; 9.6.8 և 9.6.10 ենթակետերով նախատեսված դեպքերում որոշումներն ընդունվում են բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ Խորհրդի ներկայացմամբ:
- 9.11 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացի 9.12 կետում սահմանված դեպքերից:
- 9.12 Կանոնադրության 9.6 կետի 9.6.1; 9.6.2; 9.6.3; 9.6.4 և 9.6.5 ենթակետերով սահմանված հարցերի մասին որոշումներն ընդունվում են Ընկերության բաժնետերերի ժողովին մասնակցող քվերակող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, ընդ որում 9.6.2 և 9.6.4 ենթակետերով սահմանված դեպքերում կողմ ձայների քանակը չպետք է պակաս լինի Ընկերության քվերակող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:
- 9.13 Ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվերակության արդյունքները պետք է ներկայացվեն Ընկերության բաժնետերերին 45 օրվա ընթացքում:
- 9.14 Բաժնետերն իրավունք ունի դատական կարգով գանգատարել Օրենսդրության և Կանոնադրության պահանջների խախտմամբ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումը:
- 9.15 9.6 կետի 9.6.8 ենթակետով սահմանված հարցերի քննարկումը և համապատասխան որոշումների ընդունումը տեղի է ունենում բացառապես տարեկան ժողովներում:
- 9.16 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները, բացի 9.6 կետի 9.6.3; 9.6.4 և 9.6.8 ենթակետերի, կարող են ընդունվել առանց ժողովի գումարման՝ հեռակա կարգով քվերակությամբ (հարցման միջոցով): Հեռակա կարգով քվերակությունը կատարվում է քվերաթերթիկների օգտագործմամբ, որոնք պետք է տրամադրվեն բաժնետերերին քվերաթերթիկները հետ ընդունելու համար սահմանված ժամկետից առնվազն 30 օր շուտ:
- 9.17 Ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում Խորհուրդը, որոշում է՝
- 9.17.1 ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամն ու վայրը,
- 9.17.2 ժողովի օրակարգը,
- 9.17.3 ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը,
- 9.17.4 ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը,
- 9.17.5 բաժնետերերին ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը,
- 9.17.6 քվերաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվերակությունները կատարվելու են քվերաթերթիկներով:
- 9.18 Ընկերության բաժնետերը ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով: Բաժնետերն իրավունք ունի ցանկացած ժամանակ փոխել իր լիազոր ներկայացուցչին կամ անձամբ մասնակցել ժողովին:
- 9.19 Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:
- 9.20 Ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չեն կարող սահմանվել ավելի վաղ, քան ընդհանուր ժողով գումարելու մասին որոշման ընդունումը և ավելի ուշ, քան ընդհանուր ժողովի գումարումից 45 օր առաջ:
- 9.21 Ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցվում է ժողովի գումարման օրվանից առնվազն 15 օր առաջ:
- 9.22 Ընդհանուր ժողովին բաժնետերերից բացի՝ Օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցելու իրավունք ունեն նաև այլ անձինք:
- 9.23 Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են տեղաբաշխված քվերակող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

- 9.24 Ժողովի նախագահը որոշում է ժողովի քվորումը, ներկայացնում օրակարգի հարցերը, քվեարկության սահմանված կարգը, ամփոփում է քվեարկության արդյունքները:
- 9.25 Ընկերության ընդհանուր ժողովի հեռակա նիստերը գումարվում են Կանոնադրությամբ սահմանված կարգով՝ նիստերի գումարման և անցկացման կարգի համաձայն:
- 9.26 ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ ընդհանուր ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:
- 9.27 Տարեկան ընդհանուր ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկության միջոցով:
- 9.28 Եթե ընդհանուր ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում են ընդհանուր ժողովի գումարման օրվանից առնվազն 35 օր շուտ:
- 9.29 Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել է Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:
- 9.30 Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է Օրենսդրության պահանջներին համապատասխանող քվեաթերթիկների օգտագործմամբ, որոնք պետք է տրամադրվեն բաժնետերերին՝ լրացրած քվեաթերթիկները Ընկերության կողմից հետ ընդունման ժամկետի պահից առնվազն 30 օր առաջ:
- 9.31 Ընդհանուր ժողովի ավարտից հետո եռօրյա ժամկետում կազմվում է ժողովի արձանագրություն, որում արտացոլվում են օրակարգի հարցերը, դրանց շուրջ ընթացած քննարկումների հիմնական դրույթները, քվեարկության արդյունքները և ընդունված որոշումները: Արձանագրությունը կազմվում է երեք օրինակից, որը ստորագրում են ժողովի նախագահը և քարտուղարը: Ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

10 Տնօրենների Խորհուրդը

- 10.1 Տնօրենների Խորհուրդը իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ Օրենսդրությամբ և Կանոնադրությամբ իր իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:
- 10.2 Խորհուրդը պետք է կազմված լինի առնվազն 5 և առավելագույնը 13 անդամից:
- 10.3 Ընկերության Խորհրդի անդամ կարող է լինել ցանկացած գործունակ անձ, որը համապատասխանում է գործող Օրենսդրությամբ սահմանված չափանիշներին և պահանջներին:
- 10.4 Խորհրդի անդամները ընտրվում են տարեկան ընդհանուր ժողովում՝ Ընկերության ներկա մասնակիցների կողմից, իսկ Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ նաև արտահերթ ընդհանուր ժողովում:
- 10.5 Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանում է ընդհանուր ժողովը և չի կարող մեկ տարուց պակաս լինել:
- 10.6 Խորհրդի անդամների թեկնածուների առաջադրումը և ընտրությունը իրականացվում է Օրենսդրության և Կանոնադրության դրույթների պահանջներին համապատասխան:
- 10.7 Խորհրդի անդամների կատարած աշխատանքը վարձատրվում կամ փոխհատուցվում է Խորհրդի սահմանած կարգով:
- 10.8 Խորհուրդն իր կազմից ընտրում է նախագահ, որը կազմակերպում է Խորհրդի աշխատանքները, գումարում եւ նախագահում է Խորհրդի նիստերը, կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը, նախագահում է Ընկերության ընդհանուր ժողովում, կազմակերպում է Խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը:
- 10.9 Խորհրդի իրավասությանն են պատկանում՝
- 10.9.1 Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Ընկերության հեռանկարային զարգացման եւ գործարար ծրագրերի հաստատումը,

- 10.9.2 ընդհանուր ժողովի տարեկան եւ արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաեւ դրանց գումարման եւ անցկացման կազմակերպման հետ կապված նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը,
- 10.9.3 Ընկերության գործադիր մարմնի անդամների, պատասխանատու ակտուարի, ակտուարային ստորաբաժանման աշխատակիցների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը եւ վարձատրության պայմանների հաստատումը,
- 10.9.4 Ընկերության ներքին հսկողության ստանդարտների սահմանումը,
- 10.9.5 Ընկերության ներքին աուդիտի ղեկավարի եւ անդամների նշանակումը, ներքին աուդիտի տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի ղեկավարի եւ անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,
- 10.9.6 Ընկերության տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը,
- 10.9.7 Ընկերության կազմակերպական կառուցվածքի եւ աշխատատեղերի հաստատումը,
- 10.9.8 Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշման ընդունումը,
- 10.9.9 շահութաբաժինների վճարման վերաբերյալ ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Ընկերության բաժնետերերի ցուցակի կազմումը,
- 10.9.10 Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը եւ ընդհանուր ժողովին ներկայացումը,
- 10.9.11 Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձին ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնելը,
- 10.9.12 Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը,
- 10.9.13 Ընկերությունում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումներից բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,
- 10.9.14 Ընկերության կողմից ապահովագրական գործունեության իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը,
- 10.9.15 Ընկերության տարածքային եւ ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Ընկերության ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջեւ գործառութային պարտականությունների բաշխումը,
- 10.9.16 Խորհրդի անդամների վարձատրության կամ փոխհատուցման չափի սահմանումը,
- 10.9.17 դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը,
- 10.9.18 դուստր կամ կախյալ ընկերություններին մասնակցությունը,
- 10.9.19 իրավաբանական անձանց միությունների հիմնադիր հանդես գալը,
- 10.9.20 իրավաբանական անձանց միություններին մասնակցությունը,
- 10.9.21 Ընկերության պահուստային եւ այլ հիմնադրամների օգտագործումը.
- 10.9.22 Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների եւ հիմնարկների ստեղծումը,
- 10.9.23 Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու եւ ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձեւերի եւ ներքին իրավական ակտերի սահմանումը,
- 10.9.24 Օրենսդրությամբ եւ Կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:
- 10.10 Կանոնադրության 10.9 կետի բոլոր ենթակետերով թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Խորհրդի բացառիկ իրավասությանը եւ չի կարող փոխանցվել Ընկերության կառավարման այլ մարմիններին կամ այլ անձանց:
- 10.11 Առնվազն տարին մեկ Խորհուրդն իր նիստում պետք է քննարկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը), ինչպես նաեւ քննարկի եւ անհրաժեշտության դեպքում վերանայի Ընկերության գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունն ու ներքին իրավական այլ ակտերը:
- 10.12 Առնվազն եռամսյակը մեկ Խորհուրդը պետք է քննարկի Ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման, տնօրենի (տնօրինության) եւ գլխավոր հաշվապահի, պատասխանատու ակտուարի (ակտուարային ստորաբաժանման ղեկավարի) հաշվետվությունները՝ իր սահմանած կարգով եւ ձեւով:
- 10.13 Խորհրդի նիստերի քվորումը համարվում է ապահովված, եթե նիստին մասնակցում են անդամների 2/3-ը:
- 10.14 Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաանջուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի չի թույլատրվում:

- 10.15 Խորհրդի որոշումները ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:
- 10.16 Խորհրդի նիստերում հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն տնօրենի պարտադիր մասնակցությամբ: Բացառություն են կազմում այն նիստերը, որտեղ քննարկվում են տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմաններին վերաբերվող հարցերը:
- 10.17 Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո 5-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են նիստի գումարման անսաթիվը, ժամը, վայրը, նիստին մասնակցած անձինք, օրակարգը, քվեարկության դրված հարցերը և դրանց վերաբերյալ նիստին մասնակցած անձանց կարծիքները, քվեարկության արդյունքները ըստ նիստին մասնակցած անձանց կարծիքների, նիստում ընդունված որոշումները:
- 10.18 Խորհրդի նիստերի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք էլ պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:
- 10.19 Խորհրդի նիստում ընդունված որոշումները ստորագրում է Խորհրդի նախագահը, որն էլ պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

11 Ընկերության տնօրենը

- 11.1 Ընկերության տնօրենը իրականացնում է ընթացիկ գործունեության ղեկավարումը, կարող է ունենալ տեղակալներ:
- 11.2 տնօրենը նշանակվում է Խորհրդի կողմից, իսկ տեղակալները՝ Խորհրդի կողմից՝ տնօրենի ներկայացմամբ:
- 11.3 Ընկերության տնօրենը որպես իր բացառիկ իրավասություն՝
- 11.3.1 ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,
- 11.3.2 Ընկերության անունից կնքում է գործարքներ,
- 11.3.3 գործում է Ընկերության անունից առանց լիազորագրի,
- 11.3.4 տալիս է լիազորագրեր:
- 11.4 Ընկերության տնօրենը՝
- 11.4.1 Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, ինքնուրույն ստորաբաժանումների կանոնադրությունները, Ընկերության կազմակերպական կառուցվածքը,
- 11.4.2 տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- 11.4.3 սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Ընկերության աշխատակիցներին,
- 11.4.4 աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
- 11.4.5 ապահովում է ընդհանուր ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը,
- 11.4.6 բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ տարադրամային) և այլ հաշիվներ,
- 11.4.7 սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային,
- 11.4.8 Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային կանոնակարգերը, առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը,
- 11.4.9 իրականացնում է Ընկերության վարձու աշխատողների ընդունման, նույն գործատուի մոտ այլ աշխատանքի փոխադրման ու աշխատանքից ազատման հրամանագիրքը վարելու և պահպանելու պարտականությունների կատարումը:
- 11.4.10 Ընկերության տնօրենը Խորհրդին պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ, ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ Խորհրդի սահմանած կարգով:
- 11.4.11 Բացի Խորհրդի անդամներից և տնօրենից Ընկերության ղեկավար են նաև տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը եւ նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը

- եւ անդամները, պատասխանատու ակտուարը, տարածքային եւ կառուցվածքային ստորաբաժանման (դեպարտամենտի, վարչության, բաժնի, խմբի կամ այլ միավորի) ղեկավարը եւ գլխավոր հաշվապահը, մասնաճյուղի առկայության դեպքում նաեւ մասնաճյուղի տնօրենը, նրա տեղակալը, գլխավոր հաշվապահը, նրա տեղակալը:
- 11.4.12 Ընկերության ղեկավարների նկատմամբ պահանջները, նրանց վերապահված լիազորությունները և իրավասությունները, կարգավորվում են Օրենսդրությամբ և Կանոնադրությամբ:

12. Ընկերության ներքին աուդիտը

- 12.1 Ներքին աուդիտի ղեկավարին եւ անդամներին նշանակում է Խորհուրդը:
- 12.2 Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Ընկերության կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաեւ տնօրենի և գլխավոր հաշվապահի հետ փոխկապակցված անձինք:
- 12.3 Ներքին աուդիտը, Խորհրդի հաստատած կանոնակարգի համաձայն`
- 12.3.1 հսկողություն է իրականացնում Ընկերության ընթացիկ գործունեության եւ ռիսկերի նկատմամբ,
- 12.3.2 հսկողություն է իրականացնում գործադիր մարմնի, գլխավոր հաշվապահի, տարածքային եւ կառուցվածքային ստորաբաժանումների, պատասխանատու ակտուարի ու ակտուարային ստորաբաժանման կողմից օրենքների, այլ իրավական ակտերի եւ Ընկերության ներքին իրավական ակտերի, գործադիր մարմնին կամ գլխավոր հաշվապահին տրված հանձնարարականների կատարման նկատմամբ,
- 12.3.3 եզրակացություններ եւ առաջարկություններ է տալիս Խորհրդի ներկայացրած, ինչպես նաեւ սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ:
- 12.4 Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:
- 12.5 Յուրաքանչյուր տարի Խորհուրդը հաստատում է ներքին աուդիտի տարեկան ծրագիրը, որում պետք է ներառվեն`
- 12.5.1 այն ոլորտները, որտեղ պետք է իրականացվի աուդիտորական ստուգում,
- 12.5.2 առանձին ոլորտներում աուդիտորական դիտարկման բովանդակության նկարագրությունը:
- 12.6 Ներքին աուդիտի ղեկավարը Խորհրդին (պատճենը` գործադիր մարմնին) է ներկայացնում հետեւյալ հաշվետվությունները`
- 12.6.1 հերթական` տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին,
- 12.6.2 արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ: Ընդ որում, եթե խախտումները հետեւանք են գործադիր մարմնի, գլխավոր հաշվապահի կամ Խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես Խորհրդի նախագահին:
- 12.7 Ներքին աուդիտի ղեկավարի հաշվետվությունը պետք է առնվազն պարունակի հետեւյալ տեղեկությունները`
- 12.7.1 աուդիտորական դիտարկման նկարագրությունը,
- 12.7.2 դիտարկման արդյունքում բացահայտված խախտումներն ու թերությունները եւ դրանց վերացման վերաբերյալ առաջարկված միջոցառումները,
- 12.7.3 հայտնաբերված խախտումների եւ թերությունների վերացման մասին ներքին աուդիտի եզրակացությունը:
- 12.8 Ստուգումների արդյունքում խախտումներ հայտնաբերելու դեպքում ներքին աուդիտի ղեկավարը հաշվետվությունները ներկայացնում է առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում:
- 12.9 Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք ներկայացնել Խորհրդին, իսկ պատճենը` Օրենսդրությամբ սահմանված վերահսկող մարմնին:

13. Ընկերության գլխավոր հաշվապահը

- 13.1 Ընկերության գլխավոր հաշվապահը կամ նման պարտականություններ իրականացնող անձը իրականացնում է "Հաշվապահական հաշվառման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները եւ պարտականությունները:

- 13.2 Գլխավոր հաշվապահին նշանակում է Խորհուրդը՝ տնօրենի ներկայացմամբ:
- 13.3 Գլխավոր հաշվապահի իրավունքները եւ պարտականությունները կարող են փոխանցվել այլ անձի միայն Օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 13.4 Գլխավոր հաշվապահին առնվազն եռամսյակը մեկ Խորհրդին եւ տնօրենին է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն՝ Խորհրդի հաստատած ձեւով եւ բովանդակությամբ:
- 13.5 Գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի եւ հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական եւ վիճակագրական հաշվետվություններն Օրենսդրությամբ սահմանված կարգով պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաեւ Ընկերության մասնակիցներին, պարտատերերին եւ մանուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար: Սույն մասում նշված հաշվետվությունների պատրաստման, ներկայացման կամ հրապարակման համար գլխավոր հաշվապահի պատասխանատվությունը չի տարածվում Ընկերության պատասխանատու ակտուարի կողմից օրենքով սահմանված հաշվետվությունների պատրաստման, ներկայացման, հրապարակման վրա: Ընկերության այն հաշվետվությունները, որոնք պարունակում են տարբեր տեղեկատվություն, որի պատրաստման, ներկայացման կամ հրապարակման համար պատասխանատու են գլխավոր հաշվապահին ու պատասխանատու ակտուարը, ստորագրում են այդ երկու պաշտոնատար անձինք:

14. Պատասխանատու ակտուարը

- 14.1 Ընկերության պատասխանատու ակտուարին նշանակում է Խորհուրդը:
- 14.2 Ընկերության պատասխանատու ակտուարը՝
- 14.2.1 ստուգում է ապահովագրավճարների հաշվարկման եւ տեխնիկական պահուստների ձեւավորման համապատասխանությունը Օրենսդրությամբ սահմանված պահանջներին,
- 14.2.2 պարզում է, թե ապահովվում է արդյոք ապահովագրության պայմանագրերից բխող պարտավորությունների կատարումը հաշվարկված ապահովագրավճարներով եւ ձեւավորված պահուստներով,
- 14.2.3 հաշվարկում է ապահովագրական սակագները, ապահովագրավճարները և ապահովագրական գումարները,
- 14.2.4 պատրաստում, ներկայացնում կամ հրապարակում է Օրենսդրությամբ սահմանված հաշվետվությունները,
- 14.2.5 իրականացնում է Օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:
- 14.3 Գործադիր մարմինը պարտավոր է պատասխանատու ակտուարին տրամադրել իր լիազորություններն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկություններ:
- 14.4 Պատասխանատու ակտուարը պարտավոր է եռամսյակը մեկ Խորհրդին ներկայացնել հաշվետվություն:
- 14.5 Եթե պատասխանատու ակտուարը (ակտուարային ստորաբաժանման ղեկավարը) իր լիազորություններն իրականացնելիս բացահայտել է, որ ապահովագրավճարները չեն հաշվարկվել, իսկ տեխնիկական պահուստները չեն ձեւավորվել Օրենսդրությամբ սահմանված կարգով, եւ դրա արդյունքում ապահովագրության պայմանագրերից բխող պարտավորությունների կատարումը դրվել է վտանգի տակ, ապա պատասխանատու ակտուարն այդ մասին պետք է անհապաղ, բայց ոչ ավելի, քան 5 օրվա ընթացքում գրավոր տեղեկացնի Խորհրդին, տնօրենին եւ Օրենսդրությամբ սահմանված վերահսկող մարմնին:
- 14.6 Ընկերության տարեկան հաշվետվությունը պետք է ներառի պատասխանատու ակտուարի հաշվետվությունը եւ ապահովագրավճարների ու տեխնիկական պահուստների՝ Օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված լինելու մասին եզրակացությունը:

15. Ընկերության արտաքին աուդիտը

- 15.1 Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը յուրաքանչյուր տարի պետք է ենթարկվի աուդիտի՝ աուդիտ իրականացնող անձի կողմից: Տարեկան արտաքին աուդիտ իրականացնող անձին հաստատում է ընդհանուր ժողովը:
- 15.2 Ընկերության աուդիտ ցանկացած ժամանակ կարող է հրավիրվել Խորհրդի կողմից՝ Ընկերության միջոցների հաշվին:
- 15.3 Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն արտաքին աուդիտն իրականացնող անձի կողմից կարող է իրականացվել նաև Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 5 տոկոսի սեփականատեր հանդիսացող մասնակիցների պահանջով: Տվյալ դեպքում աուդիտն իրականացնող անձին ընտրում, նրա հետ պայմանագիր են կնքում, նրա ծառայությունների դիմաց վճարում են աուդիտ պահանջող մասնակիցները: Նշված անձինք կարող են Ընկերությունից պահանջել իրենց կատարած ծախսերի հատուցում, և Ընկերությունը պարտավոր է հատուցել դրանք, եթե այդ աուդիտն ընդհանուր ժողովի կամ Խորհրդի որոշմամբ արդարացված է եղել Ընկերության համար:
- 15.4 Արտաքին աուդիտն իրականացնողը պետք է կազմի աուդիտորական եզրակացություն և ներկայացնի աուդիտորական հաշվետվություն, որոնք Օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում պետք է հրապարակվեն և ներկայացվեն համապատասխան մարմիններին:
- 15.5 Եթե աուդիտորական եզրակացությունը և (կամ) հաշվետվությունը կազմվել են համապատասխան օրենքներով և իրավական ակտերով սահմանված պահանջների խախտմամբ, կամ աուդիտը չի իրականացվել սահմանված կարգով, ապա Օրենսդրությամբ սահմանված համապատասխան վերահսկող մարմինը կարող է չընդունել այն և պահանջել Ընկերության հաշվին աուդիտ իրականացնող այլ անձի կողմից նոր աուդիտ:
- 15.6 Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի նկատմամբ պահանջները, աուդիտի անցկացման պայմանները և կարգը, աուդիտորական եզրակացության և հաշվետվությունների ներկայացման և հրապարակման նկատմամբ պահանջները սահմանվում են Օրենսդրությամբ:

16. Ընկերության և նրա մասնակիցների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման և տրամադրման կարգը:

- 16.1 Ընկերությունը պարտավոր է Օրենսդրությամբ սահմանված կարգով և ձևով հրապարակել իր հետևյալ տեղեկատվությունը՝
 - 16.1.1 Ընկերության կազմակերպական կառուցվածքը,
 - 16.1.2 Ընկերության ղեկավարների ցանկը և անձնական տվյալները,
 - 16.1.3 ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ արտաքին աուդիտի եզրակացության պատճենը,
 - 16.1.4 տարեկան ընդհանուր ժողովի մասին հայտարարությունը,
 - 16.1.5 շահութաբաժիններ վճարելու մասին որոշումների պատճենները, ինչպես նաև Ընկերության շահութաբաժնային քաղաքականությունը սահմանող ակտերի պատճենները՝ դրանց առկայության դեպքում,
 - 16.1.6 Ընկերությունում Օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակալից մասնակցություն ունեցող համարվող մասնակիցների մասին տեղեկատվություն՝ նրանց անունը, ազգանունը (անվանումը), Ընկերությունում նրանց ունեցած մասնակցության չափը (բացառությամբ այն անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց, որոնք չունեն Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցություն), նախորդ տարվա ընթացքում նրանց եւ նրանց հետ փոխկապակցված անձանց հետ Ընկերության կնքած ապահովագրության պայմանագրերի վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ ապահովագրության օբյեկտը, ապահովագրական գումարը եւ ապահովագրական սակագինը,
 - 16.1.7 Խորհրդի, գործադիր մարմնի անդամների ցանկը եւ անձնական տվյալները (անունը, ազգանունը, ծննդյան անսաթիվը, կենսագրությունը) Խորհրդի անդամների, տնօրենի եւ գլխավոր հաշվապահի՝ նախորդ տարվա ընթացքում Ընկերությունից ստացված ամբողջ վարձատրության (ներառյալ՝ պարգևատրումների, Ընկերության համար որոշակի աշխատանք կատարելու դիմաց վճարների, աշխատավարձին հավասարեցված այլ եկամուտների) չափը, նրանց եւ նրանց հետ փոխկապակցված անձանց հետ Ընկերության կնքած ապահովագրության պայմանագրերի վերաբերյալ

- տվյալներ, այդ թվում՝ ապահովագրության օբյեկտը, ապահովագրական գումարը եւ ապահովագրական սակագինը,
- 16.1.8 Օրենսդրությամբ սահմանված այլ տեղեկատվություն և տվյալներ բացառությամբ առելտրային, ապահովագրական կամ այլ գաղտնիք կազմող տեղեկությունների,
- 16.1.9 օրական կտրվածքով թարմացված տեղեկություններ՝ իրենց կողմից առաջարկվող ապահովագրական ծառայությունների վերաբերյալ՝ ըստ ապահովագրության տեսակների, դասերի եւ ենթադասերի, այդ թվում՝ ապահովագրության պայմանները եւ առաջարկվող ապահովագրական սակագները:
- 16.2 Ընկերությունը պարտավոր սահմանված ժամկետում և ձևով հրապարակել նաև Կանոնադրության 16.1 կետի բոլոր ենթակետերում նշված տեղեկությունների մեջ տեղի ունեցած փոփոխությունները:
- 16.3 Ընկերությունը պարտավոր է նաև ցանկացած անձի պահանջով Օրենսդրությամբ սահմանված կարգով նրան տրամադրել՝
- 16.3.1 Ընկերության պետական գրանցման վկայականի եւ Կանոնադրության պատճենները,
- 16.3.2 Ընկերություն թողարկած պարտատոմսերի եւ այլ արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման դեպքում՝ արժեթղթերի շուկան կարգավորող օրենքներով եւ այլ իրավական ակտերով սահմանված տեղեկությունները,
- 16.3.3 Օրենսդրությամբ նախատեսված այլ տեղեկություններ:
- 16.4 Ընկերության յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի Ընկերությունից անվճար ստանալու Ընկերության վերջին տարեկան հաշվետվության եւ արտաքին աուդիտի եզրակացության պատճենները:
- 16.5 Տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 2 եւ ավելի տոկոսին տիրապետող յուրաքանչյուր մասնակցի (մասնակիցների) պահանջով Ընկերությունը նրան (նրանց) պետք է անվճար տրամադրի հետեւյալ տեղեկությունները, թեկուզ դրանք կազմեն ապահովագրական, առելտրային կամ այլ գաղտնիք՝
- 16.5.1 Խորհրդի անդամների, տնօրենի եւ գլխավոր հաշվապահի վերաբերյալ Օրենսդրությամբ նախատեսված տեղեկությունները,
- 16.5.2 Խորհրդի անդամների, տնօրենի եւ գլխավոր հաշվապահի՝ նախորդ տարվա ընթացքում Ընկերությունից ստացված ամբողջ վարձատրության (ներառյալ՝ պարգևատրումների, Ընկերության համար որոշակի աշխատանք կատարելու դիմաց վճարների, աշխատավարձին հավասարեցված այլ եկամուտների) չափը, նրանց եւ նրանց հետ փոխկապակցված անձանց հետ Ընկերության կնքած ապահովագրության պայմանագրերի վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ ապահովագրության օբյեկտը, ապահովագրական գումարը եւ ապահովագրական սակագինը, Ընկերությունում նշանակալից մասնակցություն ունեցող մասնակիցների մասին տեղեկատվություն՝ նրանց անունը, ազգանունը (անվանումը), Ընկերությունում նրանց ունեցած մասնակցության չափը (բացառությամբ այն անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց, որոնք չունեն Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցություն), նախորդ տարվա ընթացքում նրանց եւ նրանց հետ փոխկապակցված անձանց հետ Ընկերության կնքած ապահովագրության պայմանագրերի վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ ապահովագրության օբյեկտը, ապահովագրական գումարը եւ ապահովագրական սակագինը,
- 16.5.3 Ընկերության եւ նրա հետ կապված անձանց միջեւ կնքված խոշոր գործարքների, ինչպես նաև այն գործարքների մասին, որոնք կնքվել են այդ տեղեկություններն ստանալու վերաբերյալ պահանջը ներկայացնելուն նախորդող երկու տարվա ընթացքում եւ կապված են Ընկերության կողմից սույն օրենքով սահմանված գործառնությունների իրականացման հետ,
- 16.5.4 Ընկերության կողմից Ընկերության հետ կապված անձի նկատմամբ ստանձնած պարտավորությունների մասին,
- 16.5.5 Ընկերության՝ միանման քաղաքականություն իրականացնող մասնակիցների խմբերի ստեղծմանն ուղղված պայմանագրերի առկայության մասին, ինչպես նաև Ընկերության՝ այդ պայմանագրերի կողմ հանդիսացող մասնակիցների անունները (անվանումները),
- 16.5.6 Ընկերության հաշվեկշռում արտացոլված գույքի նկատմամբ Ընկերության գույքային իրավունքները հավաստող փաստաթղթերի, ընդհանուր ժողովի եւ կառավարման այլ մարմինների հաստատած՝ Ընկերության ներքին ակտերի, Ընկերության առանձնացված ստորաբաժանումների եւ հիմնարկների կանոնադրությունների, Ընկերության կողմից պետական մարմիններին ներկայացվող ֆինանսական ու

- վիճակագրական հաշվետվությունների, ընդհանուր ժողովի, Խորհրդի, տնօրինության նիստերի արձանագրությունների, Օրենսդրությամբ սահմանված կարգով ստուգումներ անցկացրած անձանց կողմից կազմված եզրակացությունների պատճենները, Ընկերության եւ (կամ) Ընկերության ղեկավարի նկատմամբ կիրառված պատժամիջոցների վերաբերյալ իրավասու մարմինների կողմից կայացված որոշումների պատճենները, ներքին աուդիտի ղեկավարի կողմից Խորհրդին եւ տնօրենին ներկայացված հաշվետվությունների պատճենները,
- 16.5.7 այն իրավաբանական անձանց ցանկը, որոնց կանոնադրական կապիտալում Ընկերության ղեկավարները կամ նրանց հետ փոխկապակցված անձինք ունեն 20 եւ ավելի տոկոս մասնակցություն կամ նրանց որոշումների վրա ներազդելու հնարավորություն:
- 16.6 Ընկերության բոլոր մասնակիցներին պետք է տրամադրվեն հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները:
- 16.7 Ընկերության մասնակցի ստացած տեղեկությունները նրա կողմից չեն կարող փոխանցվել այլ անձանց, ինչպես նաեւ դրանք չեն կարող օգտագործվել Ընկերության գործարար համբավն արատավորելու, Ընկերության մասնակիցների կամ հաճախորդների իրավունքներն ու օրինական շահերը խախտելու կամ նմանատիպ այլ նպատակներով: Հակառակ դեպքում նրանք ենթակա են պատասխանատվության՝ Օրենսդրությամբ եւ (կամ) պայմանագրով սահմանված կարգով:
- 16.8 Խորհրդի անդամների, տնօրենի, գլխավոր հաշվապահի վերաբերյալ, ինչպես նաեւ Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ Ընկերության մասնակիցներին տրամադրվող տեղեկատվությունը պետք է ներառի Օրենսդրությամբ սահմանված տվյալներ:

17. Ընկերության մասնաճյուղերը և ներկայացուցչությունները

- 17.1 Ընկերությունը կարող է Հայաստանի Հանրապետության տարածքում և դրանից դուրս բացել մասնաճյուղ եւ ներկայացուցչություն:
- 17.2 Մասնաճյուղը Ընկերության՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող եւ Ընկերության գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանում է, որը գործում է Ընկերության կողմից տրված լիազորությունների սահմաններում եւ նրա անունից իրականացնում է ապահովագրական գործունեություն: Մասնաճյուղը կարող է ապահովագրական գործունեություն իրականացնել միայն ապահովագրության այն դասերով, որի համար լիցենզիա է ստացել Ընկերությունը:
- 17.3 Ընկերության ներկայացուցչությունն Ընկերության՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող եւ Ընկերության գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանումն է, որը ներկայացնում է Ընկերությունը, ուսումնասիրում է շուկան, Ընկերության անունից կնքում է պայմանագրեր, իրականացնում է համանման այլ գործառնություններ: Ներկայացուցչությունն ապահովագրական գործունեություն իրականացնելու իրավունք չունի:
- 17.4 Ընկերության մասնաճյուղերը և ներկայացուցչությունները գործունեություն են ծավալում համաձայն Օրենսդրության պահանջների և իրենց կանոնադրությունների:
- 17.5 Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների բացումը, դրա համար նախնական թույլտվություն ստանալը, նրանց գրանցումը և գործունեության դադարեցումը իրականացվում է Օրենսդրության (օտարերկրյա պետություններում բացելու դեպքում նաև այդ երկրների օրենսդրության) պահանջներին համապատասխան:

18. Ընկերության լուծարումը

- 18.1 Ընկերությունը լուծարվում է՝
- 18.1.1 Ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ (ինքնալուծարում),
- 18.1.2 լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու դեպքում,
- 18.1.3 Ընկերության սնանկության դեպքում:
- 18.2 Ընկերության ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում կայացնելու Ընկերության լուծարման մասին, եթե Ընկերությունը փոխանցել է իր ապահովագրական պորտֆելն ամբողջությամբ, կատարել է ապահովագրության պայմանագրերից բխող բոլոր

- պարտավորությունները եւ ունի բավարար միջոցներ բոլոր այլ պարտատերերի պահանջները բավարարելու համար:
- 18.3 Լուծարելու համար ընկերությունը սահմանված կարգով և ժամկետներում պետք է ստանա Օրենսդրությամբ սահմանված վերահսկող մարմնի նախնական համաձայնությունը:
- 18.4 Ապահովագրական պորտֆելն ամբողջությամբ փոխանցելուց եւ ապահովագրական գործունեությունից բխող իր բոլոր պարտավորությունները պատշաճ կերպով կատարելուց հետո միայն ընդհանուր ժողովը կարող է լուծարման մասին որոշում ընդունել:
- 18.5 Լուծարման մասին որոշման ընդունումից հետո Ընկերությունը Օրենսդրությամբ սահմանված ժամկետում և կարգով վերահսկողին է ներկայացնում լուծարման թույլտվություն ստանալու դիմում, որը բավարարվելու դեպքում սկսվում է լուծարման հետագա գործընթացը:
- 18.6 Ընկերության լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը՝ դադարած, այդ մասին համապատասխան պետական գրանցում կատարելու պահից:



Համարակալված, կնքված և կարված է
18 (տասնութ) թերթ:

Իմ կից են զավորման ու գրանցման բաժնի պետ՝



Հովհաննիս Բաբայան
Կենտրոն, ազգանուն ստորագրություն

վերահսկող՝
Արմեն Բաբայան
Կենտրոն, ազգանուն ստորագրություն